

ԺԱՄԱՆՍԱԿԱԿԻՑ ԳԻՊՔ

Երկրաւեայ Կարգի :

ԱՍ տարուանս վերջի ամիսները նշանաւոր եղան երկարակեաց մարդկանց իրենց երկայն սապարէզը լրմնընելով, որոնց նշանաւորներն հոս գնեցիք .

Ե. Պորտոյի մօտ Քոստնայք ըսուած գեղը Տուրիսն անունով կնիկ մը մեռեր է 120 տարուան : Ասիկայ 1732 կուստալուփա ծնած էր ու Գաղղիացւոց առջի հասարակապետութեան երկրորդ սարին այրի մնացեր էր . քիչ ատենէն երկրորդ էրիկն ալ մեռեր էր : Հարիւր տարուան որ եղեր էր՝ իր ունեցածը չունեցածը իր ժառանգներուն թողեր է, այս պայմանով որ իր սպրուստը հոգան . որոնք թէպէտ շատ ուրախացեր են, բայց դեռ քսան տարի առածներուն շահը տալու ստիպուեր են, ու վնասով ելեր են :

Բ. Քարոլինայի մէջ սեպտեմբերի 30ին Պօլոս Ֆերմինիք անունով մէկը մեռեր է, որ 1731ին Զուլցերայի մէջ ծնած է եղեր, որով մեռնելու ատենը 121 տարուան, 8 ամսուան և 6 օրուան է եղեր . ինքը իր որդւոցմէ աւելի ապրեր է, և տեսեր է իր թոռներուն թոռնեայները, որոնց շնտակ գծի յաջորդները 82 հոգի են, և անոնցմէ 18 հոգի իր անունն ունին : Տասնուվեց տարիէ ՚ի վեր ականջը խլացեր է . և երեսուն տարիէ ՚ի վեր միայն պտուղ, հաց, ջուր, կաթ ու մեղր, կ'ուտէ եղեր :

Գ. Գաղղիայի Պոն քաղաքը հոկտեմբերի 15ին փառաւոր հացկերոյթ մը եղեր է . աս հարկինքը տուողը Պուլչերոն անունով խաթունն է եղեր իր հարիւրամեան տարեգարծի ուրախութեան համար . ինքը մասց արթնութեամբը ու մարմնոյն առողջութեամբը շատ շատ ութսուն տարուան կ'երեցնէ . և Պիւֆֆոն բնապատմին ազգական ըլլալով զանիկայ լաւ ճանչցեր է ու դեռ կը յիշէ, որն որ 65 տարի առաջ մեռած է :

Դ. Գաղղիոյ մէջ ամենէն աւելի Տորտոներ նահանգը կը գտուին երկարակեաց մարդիկ : Մօտերս քահանայ մը սաստիկ ծերութեանէն անկարողացած անկողին ընկեր է . ասիկայ տունը մարդ մը չունէ նալուն իրեն օգնական, դրացիները պառաւ մը

քովը դրեր են՝ որ 114 տարուան է եղեր, և տասնըջորս անգամ կառավարութեան փոփոխութիւն տեսեր է Գաղղիոյ մէջ :

Կէնդանի Ռեաւել :

ԼԻԼ քաղքին Ազատութիւն ըսուած օրագիրը նոյեմբերի 11 թուոյն մէջ կը գրէ . « Քուլումպոն անունով հրամանատարը որ մահգրով Անմահն Քուլումպոն կ'ըսուէր, 84 տարուան մեռեր է : Աս ջորականիս վարքին մէջ կարգէ դուրս բանն աս է որ Անտէպոցմէ հրացանի բռնուելէն ետե 60 տարի ալ դեռ ապրեր է : Գաղղիացւոց առջի հասարակապետութեան ժամանակը Քուլումպոն գընդապետ մը ըլլալով խառնարարաց տարւոյն 17 ամին մարգաց ամսոյն երկուքին՝ իրեն պզտի գունգովը Սէն-Պրիէօգի վրայ երթալու ատեն, Անտէպոցմէ քաղմութիւ գնդէ մը պաշարուեցաւ ու անոնց ձեռքը գերի ընկաւ : Ինքը թէ որ ուզեր զօրաց ծածկաբառը 1 յայտնելով կրնար ազատիլ, բայց աւելի յանձն առաւ մահը, քան թէ իր պաշտօնին մէջ մասնութիւն ընելը, թէպէտ և ազոց տէր էր . ուստի զինքը հրացանի բռնեցին . երկու գնտիկ ստորին ուրովայնին եկան, ու թ գնտիկ ալ կուրծքին : Եւ որպէս զի աւելի տպահով ըլլան իրեն մեռնելուն վրայ՝ շորս անգամ ալ հրացանին սլաքովը վիրաւորեցին, գլուխն ալ լաւ մը հրացանի ստորովը ծեծեցին : Երբոր զինքը թաղելու վրայ էին՝ ազմուկ մը փրթաւ՝ թէ Լամպալէն գունգ մը զօրք կուգայ . ասով Անտէպոցիք ձգեցին զինքը ու փախան : Եկողները Քուլումպոն մարմինը դտան, և կենաց նշոյլ մը տեսնելով վրան, աւին զինքը Լամպալ տարին . հոն տեղը ութը վիրաբուժներու անգագար խնամքովը՝ իննսուն օրուան մէջ կամաց կամաց իր առողջութիւնը գտաւ : Անկէց ետե ինչուան 1814 շատ քաջութիւններով ծառայեց տերութեան : Զետոյ ձգեց զինուորական վիճակը՝ ու իր ընտանեաց հետ Լիլ քաղաքը քաշուեցաւ » :

Ի թա . Parola d'ordine. ՅՃ . Փարուս .